ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 31
20 մայիսի 2016թվականի

<<ՇԻՐԱԿ-ՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով. <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի <<Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> թիվ 1851-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1. Մարալիկ համայնքում նորակառույց, համայնքի սպասարկման տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Գույքի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Մարալիկ համայնք:
   Ծածկագիր՝ 08-003
   Գույքի մակերեսը՝ մոտ 3500.0 ք/մ:
   Գույքի նպատակային նշանակությունը՝ բնակչության ջրամատակարարում և ջրահեռացում:
   Հողամասի գործառնական նշանակությունը՝ այլ հողեր:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ՄԱԿԱՐՅԱՆ ԲԱԲԿԵՆ

2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՍՈՍ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄ

6. ՍԱՀԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ք. Մարալիկ

20 մայիսի 2016թվական